մերոյ երիս ամաւ ժամանակաւ առ Տեառն մանաւէի, և բրաբիօնի, զի մինն իմանէ բազմեսցի փառօք և պատուօք ընդ փառաւոր տանուտէրս 'ի գահն մեծ և բարեվարք տանն Հայոց, ազատապէս տացէ պաշտօն, ընդունեսցի Օրէնս կարգադրութեան և ընդ տանուտերօք հանդերձ արասցէ հրաման ընդ Օրինօք հայոց 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, և զամենայն զոր ինչ հրաման 'ի գահէն մեծ և բարեվարք տանէն հայոց հանդերձ փոխանորդիւ մերով ձեռնադրեալ եղցէ ընդունելի մեզ լիցի և համարեսցի իբրև կամք և հրամանս մեր, և մեք բոլոր ժողովրդիւ կատարումն հաւուցանեմք հրամայեցեալն անթերի և առանց պատճառի, գրուեցաւ 'ի աշխարհն վասպուրականի մէնջ մեր ձեռնադրեցաւ առաջի առենի երից վկայից այսմ աւուր դեկտեմբերի ամսոյ 10. յամի տեառն փրկչին մերոյ 1773։

Վկայեմք, որ ձեռնագրեցին և կնքեցին և յանձնեցին։

Բաղրամ Մարաշեցի, ○
Միքայէլ Մեղրու, ○
Սարգիս Հեղվարդու, ○

Դանիէլ իշխան Խօշաբ քաղաքի. ○
Մանասէ զաւառապետ բծնոնեաց. ○
Գրիգոր Թեօֆխայ ուտից. ○